

УДК 378.046.2

Ն. Վ. Աղայան  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱ

**Բանալի բառեր՝** հետազոտական աշխատանքներ, հետազոտական աշխատանքներ կատարելու պատրաստվածության աստիճան, չափանիշներ, հետազոտական հմտությունների տիրապետման աստիճան, հարցախույզ, թեստավորում, գնահատման մեթոդիկա:

**Ключевые слова:** исследовательские работы, уровень исследовательских навыков, критерии выявления предварительной подготовленности студентов, опрос, тестирование, метод оценивания.

**Keywords:** research works, readiness for performing research works, readiness criteria, level of research skills, survey, testing, assessment method.

Աշխատանքում առաջարկվում են

- 1) ուսանողների հետազոտական աշխատանքներ կատարելու պատրաստվածության աստիճանի բացահայտման չափանիշները,
- 2) պատրաստվածության աստիճանը ստուգող թեստ կամ հարցաշար,
- 3) ստուգման արդյունքների գնահատման սանդղակ,
- 4) հետազոտական աշխատանքի գնահատման մեթոդիկա:

ԳՊՄԻ-ում կազմակերպվում է բուհական երկաստիճան ուսուցում՝ բակալավրիատի և մագիստրատուրայի, ինչպես նաև հետբուհական՝ ասպիրանտուրայի ուսումնառության ծրագրով: Առաջին աստիճանում ուսուցման և ուսումնառության բազմաթիվ ձևերից ամենաօպտիմալներն են դասախոսությունը, ինտերակտիվ ուսուցումը, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքները, մանկավարժական և ուսումնական պրակտիկաները, ռեֆերատները, թղթապանակները, թեստավորումն ու ստուգողական աշխատանքները, անհատական, ինքնուրույն և հետազոտական աշխատանքները [1]:

Ուսումնառության ընթացքում մեկ-երկու հետազոտական աշխատանքի կատարումը, այն էլ համաինստիտուտային հստակ պահանջների բացակայության պայմաններում, չի կարող ապահովել սովորողի հմտությունների ձեռք-

բերման անհրաժեշտ մակարդակ: Փորձը ցույց է տալիս, որ կրթության մագիստրոսական փուլում հետազոտական աշխատանքների կատարման որակը նկատելիորեն տուժում է՝ պահանջվող հմտությունների բացակայության պատճառով: Ուստի, կարծում ենք, թե սովորողների հետազոտական աշխատանքներ կատարելու պատրաստվածության աստիճանը բարձրացնելու հարցը արժանի է ուշադրության:

Ձեռնարկված աշխատանքում մեր կողմից փորձ է արվում առաջարկել հարցի լուծման հաջորդական քայլեր և անդրադառնալ դրանցից մի քանիսի քննարկմանը: Դրանք են՝

- ուսանողի կողմից հետազոտական աշխատանքի իրականացման համար տարբեր հմտությունների իմացության չափանիշների և դրանց իմացության տարբեր մակարդակների պահանջների ու միավորային արժեքների մշակում և օգտագործում արդեն կատարված աշխատանքի գնահատման համար,
- պահանջների իմացության աստիճանը ստուգող հարցաշարի կամ թեստի ստեղծում,
- հարցաշարով կամ թեստով անցկացվող ստուգման արդյունքների գնահատման սանդղակի ստեղծում,
- կախված նպատակից՝ իմացության ստուգում հարցախույզի կամ թեստավորման միջոցով,
- գնահատման արդյունքների օգտագործում համապատասխան հմտություններ սովորեցնող առարկայի ծրագրի մշակման համար,
- ուսումնական պլանի մեջ առարկայի ներմուծում:

Մեր աշխատանքում չենք անդրադառնա վերջին երկու կետերի վերլուծությանը և չափանիշների տարբեր մակարդակների պահանջների մշակմանը, բայց կներկայացնենք նմուշ մի չափանիշի համար:

Բուհական ուսումնառության ընթացքում սովորողի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներից ընտրել ենք ավարտական աշխատանքը: Այդ աշխատանքի ինքնուրույն և հաջող իրականացման և ներկայացման համար, բացի ակադեմիական գիտելիքներից, սովորողից պահանջվում են տարբեր կարողություններ ու հմտություններ: Պայմանավորվենք այդ հմտություններն անվանել ուսանողի պատրաստվածության չափանիշներ կամ պահանջներ և դրանք ներկայացնել հետևյալ խմբերով՝

- ընդհանուր գրագիտության հմտություններ՝ ԳՀ,
- հետազոտական աշխատանք կատարելու հմտություններ՝ ՀՀ,
- տեխնիկական ձևակերպման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտություններ՝ ՏՀ,
- ներկայացման հմտություններ՝ ՆՀ:

Վերջիններս թեստի կամ հարցաշարի միջոցով չեն ստուգվում, այլ բացահայտվում են աշխատանքի ներկայացման ընթացքում և որոշակի ներգործություն են ունենում ընդհանուր գնահատականի ձևավորման վրա:

Պահանջների մշակումից հետո ստեղծել ենք այդ պահանջների իմացությունն ստուգող հարցաշար և առաջարկել ենք այն օգտագործել ստուգման տարբեր ձևերով, օրինակ, հարցախույզ անցկացնելով կամ թեստավորումով: Հարցախույզով ստուգման ժամանակ սովորողից կպահանջվի հարցերին տալ ընդարձակ պատասխան, իսկ թեստավորման ժամանակ ընտրել առաջարկվող պատասխաններից մեկը կամ մի քանիսը: Ստուգման ձևերից յուրաքանչյուրը կախված նպատակից, ունի առավելություններ և թերություններ: Հարցախույզի արդյունքները պատկերացում կտան ուսանողի զարգացածության ընդհանուր մակարդակի, մայրենի լեզվին տիրապետելու, կապակցված, տրամաբանված գրավոր խոսք կառուցելու, վերլուծելու ընդունակությունների մասին, հետևաբար ստուգման այս ձևը առավել նպատակահարմար կլինի հատկապես հումանիտար մասնագիտությունների ուսանողների շրջանում: Սակայն, դժվարություններ կառաջանան այն պատճառով, որ պատասխանները տեխնոլոգիապես ստուգելի չեն, միարժեք լինել չեն կարող, և մեծ դերակատարության դաշտ կատեղծվի սուբյեկտիվ գործոնների համար, չի ապահովվի գնահատականի օբյեկտիվությունը ինչպես այն դեպքում, երբ ստուգողը ուսանողին չի ճանաչում, այնպես էլ հակառակ պարագայում:

Իսկ թեստավորման համար անհրաժեշտ է հարցաշարի յուրաքանչյուր հարց դարձնել թեստային առաջադրանք՝ սովորողին առաջարկելով ընտրովի մեկ կամ մի քանի ճիշտ պատասխաններ՝ այդ մասին հուշելով առաջադրանքի մեջ: Պարզության համար մեր կողմից կազմված թեստում ընդգրկել ենք միայն մեկ ճիշտ պատասխանով առաջադրանքներ: Թեստավորումը կապահովի ստուգման տեխնոլոգիական բնույթը, սակայն գնահատականի օբյեկտիվությունը դարձյալ միանշանակ չի լինի, քանի որ այդպիսի առաջադրանքները մեծացնում են պատահականության հավանականությունը, բացի այդ, տեսանելի չեն դարձնում լեզվական գրագիտության մակարդակը, վերլուծական կարողությունները և այլն, որոնք հարցախույզով ստուգման առավելություններն էին [2]:

Որոշակիորեն կտարբերվեն նաև ստուգման երկու ձևերի գնահատման մեթոդիկաները: Թեստային յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 0 կամ անբավարար և կոնկրետ դրական միավորով կամ գերազանց: Իսկ եթե ստուգումը կատարվի հարցաթերթով, ապա յուրաքանչյուր չափանիշի գնահատման համար պետք է մշակել տարբեր մակարդակների պահանջներ (ինչը այս աշխատանքի խնդիրը չենք համարել, սակայն, որպես օրինակ, մեր տրամաբանությունը պարզաբանելու նպատակով ներկայացնում ենք հմտություններից մեկի տարբեր պահանջների նմուշ)՝ համապատասխան միավորային արժեքներով: Օրինակ, Աղյուսակ 1-ում «Թեմայի ընտրություն» չափանիշի

- գնահատականը 0-8 միավոր է: Տարբեր միավորային արժեք ունեցող պահանջները կարող են պայմանականորեն լինել այսպիսին. սովորողը
- պատկերացում չի ունեցել, որ թեմայի ընտրության մեջ դերակատարություն ունի – 0 միավոր,
  - թեմայի ընտրությունը համարել է միայն ղեկավարի գործը -1 միավոր,
  - ընտրել է շատ «ծեծված, չարչրկված», նորույթ չպարունակող թեմա- 2 միավոր,
  - պատահական ընտրություն է կատարել ղեկավարի առաջարկած տարբեր թեմաների միջև- 2 միավոր (փորձել է դրսևորել ընտրելու հատկություն),
  - հիմնավորել է ղեկավարի առաջարկած թեմաներից իր ընտրությունը - 3 միավոր (ցուցաբերել է ընտրելու կարողություն),
  - առաջարկել է թեմա, բայց ընտրված պատահականության սկզբունքով – 4-5 միավոր (կախված թեմայի կարևորությունից),
  - թեմայի ընտրությունը հիմնավորել է անհրաժեշտ գրականության հասանելիությամբ - 6 միավոր,
  - թեմայի ընտրությունը հիմնավորել է խնդիրների նկատմամբ սեփական հետաքրքրությամբ - 7 միավոր,
  - առաջարկել է թեմա՝ հիմնավորելով դրա արդիականությունը - 8 միավոր:

Կիրառելով նշված սկզբունքը՝ բոլոր պահանջների գնահատումով ստացված ընդհանուր միավորային արժեքի հիման վրա կարելի է որոշել սովորողի գիտելիքների իմացության աստիճանը: Իսկ գնահատման սանդղակում սովորողի հավաքած միավորը կլինի անբավարար, բավարար, լավ թե գերազանց, կորոշվի ինչպես թեստի, այնպես էլ հարցաթերթի ընդհանուր միավորի համեմատ որոշակի տոկոսային հարաբերությամբ: Օրինակ,

- 0 - 39 % - *անբավարար*
- 40 - 69 % - *բավարար*
- 70 - 89% - *լավ*
- 90 - 100 % - *գերազանց*

Այս սանդղակը ևս պայմանական է, քանի որ սանդղակ կազմելու անհրաժեշտությունը տեսնելու դեպքում յուրաքանչյուր կառույց կարող է մշակել իր սանդղակը:

Ստուգումների երկու եղանակների դեպքում էլ, բացի ընդհանուր միավորը որոշելուց, կարելի է առանձնացնել նաև տարբեր հմտություններից հավաքած գումարային միավորները և որոշելով դրանցից յուրաքանչյուրի տոկոսային արժեքը այդ հմտությունների համար նախատեսված առավելագույն արժեքի համեմատ՝ ստանալ հստակ պատկեր այն մասին, թե հարցման ենթարկվողը պահանջվող հմտություններից յուրաքանչյուրին ինչ մակարդակով է տիրապետում:

Աղյուսակ 1-ում ներկայացնում ենք անհրաժեշտ հմտությունների անվանումները, դրանց իմացության չափանիշները կամ պահանջները, պայմա-

նական համեմատական միավորները, դրանց ստուգման արդյունքները և աշխատանքը գնահատելու մեթոդիկայի մի քանի հարցեր: [3]: Մեր աշխատանքի ծավալը անտեղի չմեծացնելու համար առաջարկում ենք նախ ստուգման նպատակով ծառայող «Թեստ»-ի նմուշը, իսկ թեստային առաջադրանքների հարցադրումները առանձնացնելով՝ կատարել նաև «Հարցաթերթիկ»-ի հարցաշարը: Ի դեպ, թեստի դիսկրետորները կարող են նաև ուղեցույց լինել հարցաշարով ստուգման չափանիշներ կազմելու համար (ինչը արդեն նշել ենք, որ մեր աշխատանքի խնդիրը չէ):

Եթե չափանիշի պահանջները գնահատվում են 0-1 միավորներով, ուրեմն կարծևորվեն որպես անբավարար-գերազանց մակարդակներ, իսկ եթե գնահատելու համար առաջարկված են միավորների միջակայք, ապա սովորողի իմացությունը որևէ կոնկրետ միավորով գնահատելու համար, ինչպես արդեն նշել ենք, պետք է լինեն տարբեր արժեքներով գնահատվող պահանջներ՝ համապատասխան միավորներով և գնահատման սանդղակ, ինչով կորոշվի, թե սովորողի հավաքած միավորը իմացության ինչպիսի մակարդակ է ապահովում՝ անբավարար, բավարար, լավ կամ գերազանց:

### Աղյուսակ 1

	Հմտությունների խմբեր	Հետազոտական աշխատանքի կատարման և ձևակերպման պահանջներ	Պահանջներին տրվող միավորները (ընդ.՝ 100)
1	ԳՀ	Պատկերացումներ հետազոտական աշխատանքների տեսակների մասին:	0-3
2	ՀՀ	Թեմայի ընտրություն:	0-8
3	ՀՀ	Աշխատանքային պլանի կազմում:	0-5
4	ՀՀ	Աշխատանքի անհրաժեշտության հիմնավորում, նպատակների ու խնդիրների շարադրում:	0-7
5	ՀՀ	Թեմային վերաբերող գրականության աղբյուրների ուսումնասիրություն:	0-5
6	ՀՀ	Գրականության աղբյուրների ինֆորմացիայի մշակում՝ ըստ ընտրված թեմայի խնդիրների հետ ունեցած առնչությունների:	0-5
7	ՀՀ	Տարբեր նյութերի մեջ տրամաբանական կապի բացահայտում և ներկայացում:	0-5
8	ՀՀ	Մեփական հետազոտության մեթոդիկայի, նյութի շարադրում:	0-5
9	ՀՀ	Հետազոտության արդյունքների վերլուծում ոչ միայն դրական, այլև թերի մնացած արդյունքների վերաբերյալ՝ նշելով դրանց կատարելագործման ուղիները:	0-7
10	ՀՀ	Եզրակացությունների ձևակերպում, որոնք վերաբերվեն աշխատանքում առկա յուրաքանչյուր խնդրի	0-8

		կատարմանը, պարունակեն խնդրի լուծման հետագա բարելավմանը ուղղված հստակ առաջարկություններ, ինչպես նաև աշխատանքի արդյունքերը կիրառելու ոլորտների նշում:	
11	SZ	Աշխատանքն ունենա հաստատության կողմից ընդունված տվյալ տեսակի աշխատանքի ձևակերպման պարտադիր պահանջները բավարարող բաժիններ՝ օրինակ, բովանդակություն, ներածություն, գրական ակնարկ, սեփական հետազոտության նյութ և մեթոդներ, հետազոտության արդյունքների վերլուծություն, եզրակացություններ և առաջարկություններ, գրականության ցանկ, հավելված: Հաշվի առնված լինեն ընդդիմախոսների(գրախոսների) դիտողությունները:	0-2
12	SZ	Գրականության ցանկը դասավորել, օրինակ, այբբենական կարգով՝ որի դեպքում նույն հեղինակների աշխատանքները դասավորել ըստ տարեթվերի աճման կարգի կամ ըստ շարադրանքի մեջ հղումների հերթականության կամ մեկ այլ ձևով, ինչպես հաստատված է գիտության տվյալ բնագավառի կամ տվյալ ուսումնական հաստատության կամ միավորի պարտադիր նորմերով: Գրել աշխատանքի լրիվ անունը, դնել բաժանիչ՝//նշանը, բերել հրատարակման տեղը, տարեթիվը, էջերի ընդհանուր թիվը կամ հղումի էջը:	0-2
13	SZ	Շարադրանքի մեջ հղումների համար ուղիղ փակագծերում նշել գրականության ցանկում ներկայացված աշխատանքի համարը, անհրաժեշտության դեպքում համարից հետո դնել ստորակետ և նշել էջը, որից արված է հղումը:	0-1
14	ՀՀ	Աշխատանքի ամփոփագրի ձևակերպում, բանալի բառերի ընտրություն:	0-5
15	SZ	Տիտղոսաթերթի առկայություն ձևակերպված աշխատանքում, որը չի համարակալվում:	0-1
16	SZ	Համարակալումն սկսել բովանդակության էջից՝ որպես 2-րդ էջ:	0-1
17	SZ	Աշխատանքը կարող է ունենալ նաև հավելված, որի էջերը շարունակաբար համարակալում են: Այդտեղ կարող են լինել աշխատանքը կատարելու համար օգտագործված հրամաններ, նորմատիվ փաստաթղթեր, ձևաթղթեր, աղյուսակներ:	0-1
18	SZ	Պահպանված լինեն տվյալ տեսակի աշխատանքի համար ուսումնական հաստատության նորմերում արտահայտված էջերի թիվը, տեխնիկական այլ պահանջներ:	0-1

19	ՆՀ	Նյութին տիրապետում, ունկնդիրների հետ հաղորդակցվելու հմտություն, հարցերին հիմնավոր պատասխանելու կարողություն:	0-8
20	ՆՀ	Գրագետ, հստակ, հակիրճ, ամբողջական, հիմնավորումներով զեկույցի նախապատրաստում ու բանավոր մատուցման կարողություն:	0-6
21	ԳՀ	Որևէ օտար լեզվով հաղորդակցվելու որոշակի կարողություն:	0-5
22	ԳՀ	Հասկանալի և պարզ գրավոր կամ բանավոր արտահայտվելու կարողություն:	0-4
23	ԳՀ	Բառարաններից ճիշտ օգտվելու կարողություն:	0-2
24	ՏՀ	ՏՏ-երից ճիշտ օգտվելու կարողություն:	0-2
25	ԳՀ	Գրագողության մասին տեղեկացվածություն:	0-1

Մտուզվող ուսանողի պատրաստվածության թույլ և ուժեղ կողմերի գնահատականը ավելի տեսանելի դարձնելու համար արդյունքները ներկայացրել ենք նաև հմտությունները խմբավորած՝ դրանց ընդհանուր միավորներով և գնահատման սանդղակով՝ Աղյուսակ 2-ում:

### Աղյուսակ 2

1	Հետազոտական աշխատանքի պատրաստվածության հմտությունների / պահանջների / անունները	Հմտությունների համարները աղյուսակ 1-ում	Հմտություններից յուրաքանչյուրի ընդհանուր միավորը	Գնահատման սանդղակ
1.	Հետազոտական աշխատանքի հմտություններ- ՀՀ	2-10, 14	60	Բավարար՝ 40- 41,4 Լավ՝ 42-53,4 Գերազանց՝ 54 - 60
2.	Տեխնիկական հմտություններ – ՏՀ	11-13, 15- 17, 24	11	Բավարար՝ 4,4-7,59 Լավ՝ 7,7- 9,79 Գերազանց՝ 9,9 -11
3.	Ներկայացման հմտություններ – ՆՀ	19- 20	14	Բավարար՝ 5,6-9,66 Լավ՝ 9,8-12,46 Գերազանց՝ 12,6-14
4.	Ընդհանուր գրագիտության հմտություններ – ԳՀ՝	1, 21-23	15	Բավարար՝ 6-10,35 Լավ՝ 10,5-13,35 Գերազանց՝ 13,5-15

Աղյուսակ 2-ում յուրաքանչյուր տեսակի հմտության համար կոնկրետ միավորներն ստացվել են Աղյուսակ 1-ում բերված տվյալ հմտությունը ներկայացնող յուրաքանչյուր պահանջի համար նախատեսված առավելագույն միավորների գումարով: Իսկ հարցման ենթարկված սովորողի այդ հմտությունների իմացության մակարդակները որոշվում են առավելագույնի համեմատ սո-

վորողի ստացած միավորի տոկոսային բաժնով՝ ըստ աշխատանքում առաջարկված սանդղակի: Օրինակ, եթե ՀՀ-ի բոլոր պահանջների առավելագույն 60 միավորի փոխարեն ուսանողը հավաքել է 25 միավոր, ըստ գնահատման մեթոդիկայի մեջ առաջարկված սանդղակի՝ այն կկազմի առավելագույնի մոտ 41,7%-ը, այսինքն՝ կհամարվի բավարար գնահատական:

Նույն սկզբունքով մնացած հմտությունների միավորները առանձին-առանձին որոշելուց հետո կստացվի հստակ պատկեր այն մասին, թե հարցման ենթարկվողը պահանջվող հմտություններից յուրաքանչյուրին ինչ մակարդակով է տիրապետում: Իսկ եթե անհրաժեշտ է մեկ միավորով արտահայտել իմացության նախնական աստիճանը, ապա կատարվում է բոլոր հմտությունների միավորների գումարի միջինացում: Օրինակ, եթե ստուգվողն ստացել է ՀՀ-ից- 25, ՏՀ-ից -6, ԳՀ-ից- 6, ապա բոլոր միավորների գումարի միջինը կլինի 37 միավոր, որը կհամարվի անբավարար մակարդակի պատրաստվածություն: Իսկ աշխատանքի կատարման արդյունքում նշված երեք հմտություններին կավելացվի նաև ներկայացման հմտության միավորը, ու կձևավորվի վերջնական գնահատականը:

Կատարված և ներկայացված աշխատանքի վերջնական գնահատականն ի օգուտ ուսանողի կլորացման համար ցուցանիշ կարող են ծառայել նաև այլ հանգամանքներ, օրինակ՝

- օգտագործած գրականության աղբյուրների թիվը,
- վերջին տարիների հրատարակումների հարաբերական քանակը,
- բովանդակության և գրականության ցանկի համապատասխանությունը աշխատանքին և այլն:

Եթե հաստատությունում ընդունված է գնահատման այլ միավորային համակարգ, ապա համապատասխան գործակցով կարելի է կատարել միավորների համապատասխանեցում:

Իմացության աստիճանի ճշգրտումը, ինչպես արդեն նշել ենք վերևում, կարող է օգտագործվել ուսումնական պլանների մեջ համապատասխան հմտություններ ուսուցանող առարկա մտցնելու անհրաժեշտության հիմնավորման, ապա առարկայի ծրագրի մշակման ժամանակ:

Աշխատանքի ծավալը ավելորդ չմեծացնելու համար, առանձին հարցաշար և թեստ կազմելու փոխարեն, ներկայացնում ենք ստուգման համար ծառայող «Թեստ»-ի նմուշը, իսկ թեստային առաջադրանքների հարցադրումներն առանձնացնելով՝ կստացվի նաև «Հարցաթերթիկ»-ի հարցաշարը: Ի դեպ, թեստի դիսկրետորները կարող են նաև ուղեցույց լինել հարցաշարով ստուգման չափանիշներ կազմելու համար (ինչը արդեն նշել ենք, որ մեր աշխատանքի խնդիրը չէ): Թեստի մեջ ստուգվող հմտություններից յուրաքանչյուրի համար նախատեսված հարցերի թիվը հարաբերականորեն համարժեք է աղյուսակում բերված դրանց պահանջների թվին, ուստի, անկախ առաջադրանքին տրվող միավորից (պայմանականորեն ընտրել ենք 5 միավոր), հմտության տեսակա-



րար կշիռն ընդհանուր միավորի մեջ կմնա նույնը: Յուրաքանչյուր հմտության վերաբերյալ առաջադրանքները խմբավորվել են ըստ համարների՝ նշելով նաև տվյալ հմտությանը բաժին ընկնող ընդհանուր միավորները:

ՀՀ- 6; 9; 10; 11; 12; 15; 16; 17; 18; 19 :	50 միավոր
ԳՀ- 1; 2; 7; 14; 22; 26 :	30 միավոր
ՏՀ- 3; 4; 5; 8; 13; 20; 21; 23; 24; 25:	50 միավոր

### **Թեստ**

#### **Ուսանողների ավարտական հետազոտական աշխատանքի կատարման և ձևակերպման նախնական պատրաստվածության աստիճանը բացահայտելու համար**

*Անհրաժեշտ է ընտրել առավելագույն ճիշտ պատասխանը՝  
յուրաքանչյուրը 5 միավոր  
Հաջողություն ենք ցանկանում Ձեզ:*

#### **1. Ձեր կարծիքով, բուհում ուսումնառության ընթացքում ո՞ր աշխատանքներն են համարվում հետազոտական:**

ա/ Չգիտեմ՝ ինչ բան է հետազոտական աշխատանքը, բ/ ուսումնական և հետազոտական պրակտիկաները, գ/ ռեֆերատը, դիպլոմային, կուրսային, ավարտական աշխատանքները, դ/ ավարտական թեզն ու ավարտական պրակտիկան, ե/ առարկայական գիտելիքների ստուգման թեստավորումն ու ավարտական զեկուցումը, պաշտպանությունը:

#### **2. Ձեր կարծիքով, ո՞րն է հետազոտական աշխատանք սկսելու առաջին քայլը:**

ա/ Անելիքս հստակ չեմ իմանա, կխորհրդակցեմ ուրիշների հետ, բ/ կձանթանամ առաջարկվող թեմաներին, դեկավարներին, կիմանամ կատարման ժամկետները, գ/ կուսումնասիրեմ գրականություն, ապա կընտրեմ թեմա, դ/ կսպասեմ դեկավարի հանձնարարականներին:

#### **3. Ի՞նչ կանեք այն բանից հետո, երբ Ձեզ առաջարկված է կատարվելիք հետազոտական աշխատանքի թեման:**

ա/ Ինչ- որ մեկի հետ կխորհրդակցեմ, բ/ պլան կկազմեմ, գ/ կսկսեմ թեմային վերաբերող գրականություն փնտրել և ուսումնասիրել, դ/ կկարևորեմ ժամանակի մեջ տեղավորվելը:

#### **4. Ձեր կարծիքով, ի՞նչ հիմնական մասերից պետք է կազմված լինի**

##### **հետազոտական աշխատանքը:**

ա/ Չգիտեմ, բ/ ներածություն, հիմնական նյութ, եզրակացություններ, գ/ ներածություն, գրական ակնարկ, սեփական հետազոտության նյութ և մեթոդներ, արդյունքների վերլուծություն, եզրակացություն և առաջարկություններ, գրականության ցանկ, հավելված, դ/ ներածություն, գրական ակնարկ, հետազոտու-

թյան մեթոդներ, գրականության ցանկ, ե/ գրական ակնարկ, հիմնական նյութ, եզրակացություններ, առաջարկություններ, գրականության ցանկ, հավելված:

**5. *Ըստ Ձեզ, աշխատանքի ո՞ր մասում է պետք ներկայացնել հետազոտության նյութի և մեթոդների մասին:***

ա/ Ներածության մեջ, բ/ գրական ակնարկում, գ/ աշխատանքի հիմնական մասում, դ/ եզրակացություններ և առաջարկություններ մասում:

**6. *Ըստ Ձեզ, ե՞րբ է ավելի ճիշտ աշխատանքի պլանը կազմել:***

ա/ Մինչև աշխատանքն սկսելը, բ/ աշխատանքից հետո, գ/ պետք չէ, որովհետև բովանդակությունը փոխարինում է պլանին, դ/ պլանը պետք է տա ղեկավարը, ե/ բոլոր հնարավոր նյութերը հավաքելուց հետո:

**7. *Ձեր կարծիքով, ի՞նչ դեր ունի աշխատանքի պլանի կազմումը:***

ա/ Պլան ունենալը անհրաժեշտ չէ, որովհետև անընդհատ կխորհրդակցեն ղեկավարի հետ, բ/ պլան ունենալու իմաստը հասկանալի չէ, գ/ պլանը աշխատանք կատարելու հիմնական ուղեցույցն է, դ/ կարելի է աշխատել ինչպես պլանով, այնպես էլ առանց պլանի:

**8. *Անհրաժեշտ համարո՞ւմ եք արդյոք աշխատանքի բովանդակության առկայությունը, և որտե՞ղ պետք է այն լինի:***

ա/ Այո՝ սկզբում, բ/ այո՝ վերջում, գ/ ոչ, որովհետև ներածության մեջ տրվում է աշխատանքի կառուցվածքը, դ/ դա որոշում է ղեկավարը:

**9. *Ի՞նչ են բանալի բառերը:***

ա/ Վերնագիրը ներկայացնող բառերն են, բ/ թեմայի էությունը պարզաբանող բառերն են, գ/ աշխատանքում ամենաշատը հանդիպող բառերն են, դ/ դժվար ընկալվող հասկացություններն են, ե/ եզրակացության հիմնական բառերն են:

**10. *Ի՞նչ սկզբունքով կփնտրեք աշխատանքի ձևակերպման համար անհրաժեշտ գրականություն:***

ա/ Ղեկավարի ցուցումներով, բ/ չգիտեմ, գ/ ըստ թեմայի վերնագրի, դ/ ըստ պլանի կետերի, ե/ ըստ նպատակների և խնդիրների, գ/ մասնագիտական ցանկ-կացած գրականություն կարող է ունենալ օգտակար տեղեկատվություն:

**11. *Ի՞նչ սկզբունքով է պետք օգտագործել գրականության աղբյուրներից գտած նյութերը:***

ա/ Ըստ տարեթվերի հաջորդականության, բ/ ըստ մտքի պարզաբանման անհրաժեշտության, գ/ ղեկավարի առաջարկած սկզբունքով, դ/ կարևորը ցանկի մեջ ճիշտ դասավորելն է՝ ըստ ընդունված ձևի, ե/ աշխատանքի հիմնական մասերին համապատասխան:

**12. *Ի՞նչ դեր ունեն հղումները աշխատանքում:***

ա/ Ծավալն են ապահովում, բ/ հեղինակի տեղեկացվածության մասին են վկայում, գ/ աշխատանքը կազմված է հիմնականում հղումներից, դ/ օգնում են պարզաբանելու հեղինակի քննարկած միտքը, ե/ ցույց են տալիս քննարկվող հարցի զարգացման պատմությունը:

**13. *Ի՞նչ ձևով է պետք ներկայացնել հղումները աշխատանքում:***

ա/ Կնշեմ հեղինակի անունը, բ/ կնշեմ հեղինակի և աշխատանքի անունները, գ/ կնշեմ հեղինակի և աշխատանքի անունները, էջը, դ/ աշխատանքում հղումները տրամաբանորեն կապակցված կլինեն, իսկ աղբյուրների մասին կնշեմ գրականության ցանկում՝ ըստ օգտագործման հերթականության, ե/փակագծի մեջ կդնեմ միայն համարը, իսկ մանրամասները կներկայացնեմ գրականության ցանկի համապատասխան համարով:

**14. Ստորև ներկայացված շարքերից ո՞րը կօգտագործեք Ձեր մտքի դինամիկան ցույց տալու համար:**

ա/ Բայց, Բացի այդ, այդ դեպքում, ընդ որում, չնայած, վերջում հարկ է նշել, եզրակացության մեջ նպատակահարմար է նշել, բ/ ելնելով դրանից, որովհետև, դրա հետևանքով, Բացի այդ, Բացի դրանից, գ/ նախ և առաջ, երկրորդը, հաջորդը, այնուհետև, այսպիսով, նշանակում է, սրանից հետևում է, դ/ նշանակում է, հետևաբար, այսպիսով, ամփոփելով նպատակահարմար է նշել:

**15. Ստորև ներկայացված շարքերից ո՞րը կօգտագործեք որևէ երևույթի, փաստի կամ դրվածքի հակասությունը ներկայացնելու համար:**

ա/ Բայց, Բացի այդ, այդ դեպքում, ընդ որում, չնայած, վերջում հարկ է նշել, եզրակացության մեջ նպատակահարմար է նշել, բ/ ելնելով դրանից, որովհետև, դրա հետևանքով, Բացի այդ, Բացի դրանից, գ/ նախ և առաջ, երկրորդը, հաջորդը, այնուհետև, այսպիսով, նշանակում է, սրանից հետևում է, դ/ նշանակում է, հետևաբար, այսպիսով, ամփոփելով նպատակահարմար է նշել:

**16. Ստորև ներկայացված շարքերից ո՞րը կօգտագործեք ասվածը ընդհանրացնելու, ի մի բերելու համար:**

ա/ Բայց, Բացի այդ, այդ դեպքում, ընդ որում, չնայած, վերջում հարկ է նշել, եզրակացության մեջ նպատակահարմար է նշել, բ/ ելնելով դրանից, որովհետև, դրա հետևանքով, Բացի այդ, Բացի դրանից, գ/ նախ և առաջ, երկրորդը, հաջորդը, այնուհետև, այսպիսով, նշանակում է, սրանից հետևում է, դ/ նշանակում է, հետևաբար, այսպիսով, ամփոփելով նպատակահարմար է նշել:

**17. Ստորև ներկայացված շարքերից ո՞րը կօգտագործեք երևույթի, փաստի կամ հարցադրման պատճառահետևանքային կապը արտահայտելու համար:**

ա/ Բայց, Բացի այդ, այդ դեպքում, ընդ որում, չնայած, վերջում հարկ է նշել, եզրակացության մեջ նպատակահարմար է նշել, բ/ ելնելով դրանից, որովհետև, դրա հետևանքով, Բացի այդ, Բացի դրանից, գ/ նախ և առաջ, երկրորդը, հաջորդը, այնուհետև, այսպիսով, նշանակում է, սրանից հետևում է, դ/ նշանակում է, հետևաբար, այսպիսով, ամփոփելով նպատակահարմար է նշել:

**18. Աշխատանքի պլանի ո՞ր կետին է պետք հենվել եզրակացությունների արժևորման համար:**

ա/ Ներածության մեջ ներկայացված աշխատանքի նպատակի և խնդիրների, բ/ գրական ակնարկում ներկայացված հարցի պատմության, գ/ հղումների մեջ առաջ քաշված չլուծված հարցերին տված պատասխանների, դ/ սեփական հետա-

գոտության արդյունքների, ե/ եզրակացությունները արժեքավորում է հանձնա-  
ժողովը:

**19. Ի՞նչ է ամփոփագիրը, ի՞նչ նպատակով է այն գրվում, ե՞րբ է գրվում:**

ա/ Աշխատանքի կառուցվածքը ներկայացնող էջն է, գրվում է աշխատանքի սկզբում, բ/ աշխատանքի կառուցվածքը ներկայացնող էջն է, գրվում է աշխատանքի վերջում, գ/ աշխատանքի կրճատ, ամփոփ ներկայացման ձևն է, որ գրվում է աշխատանքից հետո, կարող է ունենալ բանալի բառեր, կարելի է տպագրել աշխատանքից անկախ, դ/ աշխատանքի կրճատ ձևն է, որը գրվում է սկզբում աշխատանքի մասին նախնական պատկերացում կազմելու համար:

**20. Ի՞նչ սկզբունքով է պետք դասավորել օգտագործած մայրենի և օտարալեզու գրականության աղբյուրները գրականության ցանկում:**

ա/ Անկախ լեզվից՝ այբբենական և նույն հեղինակին՝ տարբեթվերի աճման կարգով, բ/ սկզբում մայրենի, հետո ռուսերեն և այլ օտարալեզու գրականությունը՝ այբբենական և նույն հեղինակին՝ տարբեթվերի աճման կարգով, գ/ անկախ լեզվից՝ հրատարակման տարեթվերի աճման կարգով, դ/ ըստ աշխատանքում արված հղումների հաջորդականության, ե/ սկզբում մայրենի, հետո օտարալեզու գրականությունը, գ/ կարևորում եմ ոչ թե ձևի, այլ բովանակման անպայման ցանկում ներկայացնելու սկզբունքը, ե/ անհրաժեշտ է առաջնորդվել տվյալ կառույցում ընդունված կանոններով:

**21. Ձեր կարծիքով, ի՞նչ տվյալներ պետք է ներկայացնել օգտագործած աղբյուրի մասին գրականության ցանկում:**

ա/ Հեղինակի անունը, աշխատանքի /գրքի/ վերնագիրը, հրատարակման տարեթիվը, հրատարակչության անունը, էջերի ընդհանուր թիվը, հղումին համապատասխանող էջը, բ/ հեղինակի անունը, աշխատանքի /գրքի/ վերնագիրը, տարեթիվը, գ/ միայն հղում արված աշխատանքի անունը, էջը, դ/ հեղինակի անունը, գրքի վերնագիրը, տարեթիվը, էջը:

**22. Ի՞նչ է գրագողությունը:**

ա/ Երևույթի մասին պատկերացում չունեն ընդհանրապես, բ/ ոչ միտումնավոր գրագողությունը տեխնիկական սխալի հետևանք է, գ/ ոչ միտումնավոր գրագողությունը չիմացության հետևանք է, դ/ միտումնավոր գրագողությունը որոշ երկրներում քրեորեն դատապարտելի երևույթ է, ե/ ուրիշի մտքերը սեփականեցնելն է:

**23. Ինչպե՞ս պետք է աշխատանքում ներկայացվեն նկարները, զծագրերը, աղյուսակները:**

ա/ Համարակալված լինեն մեջբերումների հաջորդականությանը համապատասխան և ունենան անուններ, բ/ տարբեր տեսակի ցուցադրական նյութերը համարակալվեն առանձին-առանձին՝ սկսելով մեկից և հղվեն, գ/ տարբեր տեսակի ցուցադրական նյութերը հաջորդաբար համարակալվեն և հղվեն համապատասխան տեղում՝ միտքը պարզաբանելու համար, դ/ ունենան անուններ, մակագրություններ:

**24. Որտե՞ղ և ինչպե՞ս կարելի է ներկայացնել օգտագործած ձևաթղթերը, պաշտոնական թղթերը, հրամանները:**

ա/ Ինչպես մնացած հղումները՝ հաջորդաբար համարակալելով, բ/ չգիտեմ, գ/ կհարցնեմ ղեկավարին կամ հրահանգը կատանամ ղեկավարից, դ/ կունենան վերնագրեր և համարներ, ե/ աշխատանքի «Հավելված» մասում՝ շարադրանքում ներկայացված համարով և անվանումով:

**25. Ե՞րբ է ուսանողը տեղեկացվում գրախոս/ներ/ի դիտողությունների մասին:**

ա/ Աշխատանքի ներկայացումից հետո՝ աշխատանքի վերաբերյալ կարծիքներ արտահայտելու ժամանակ, բ/ աշխատանքի ներկայացումից անմիջապես առաջ, որպեսզի ներկայացման ժամանակ անդրադառնա դրանց, գ/ աշխատանքի վերջնական ձևակերպումից հետո՝ մինչև ներկայացումը, ներկայացման ժամանակ դրանց անդրադառնալու համար, դ/ այդ մասին կորոշի ղեկավարը, ե/դիտողությունների մասին ընթացքում տեղեկացնում է ղեկավարը:

**26. Ինչպե՞ս էք գնահատում օտար լեզուների ձեռք բերած հմտությունները:**

ա/ Բացի մայրենիից ուրիշ լեզուներ չգիտեմ, բ/ բառարանով կարող եմ օգտվել ռուսերենից, գ/ ռուսերենին լավ եմ տիրապետում, այլ օտար լեզվով /նշել, որ լեզուն/ գրականությունից կարող եմ օգտվել բառարանների միջոցով, դ/ բացի ռուսերենից, ազատ տիրապետում եմ նաև այլ օտար /նշել որ լեզուն/երի//լեզվի, ե/ ռուսերենով և այլ օտար լեզվով /նշել որ լեզուն/երը/ կարող եմ օգտվել բառարանի միջոցով:

**Թեստի պատասխաններ**

1/ գ: 2/ ա: 3/ բ: 4/ գ: 5/ գ: 6/ ա: 7/ գ: 8/ ա: 9/ բ: 10/ դ: 11/ բ: 12/ դ:  
13/ ե: 14/ գ: 15/ դ: 16/ դ: 17/ բ: 18/ ա: 19/ գ: 20/ ե: 21/ ա: 22/ դ: 23/ ա:  
24/ ե: 25/ գ: 26/ դ:

**Н. В. Адамян**

**Методика оценивания степени предварительной подготовленности студентов к проведению исследовательских работ и представленной исследовательской работы**

В работе предлагается:

1) критерии выявления предварительной подготовленности студентов к проведению исследовательских работ, 2) тест и опросник, проверяющий степень предварительной подготовленности студентов, 3) шкала оценивания данных тестирования или опросника, 4) методика оценивания результатов исследовательской работы.

**N. V. Adamyan**  
**Assessment Methodics for Students' Research Readiness**  
**and Outcomes of Research Works**

The work includes:

- 1) Checking criteria of readiness in the student's research work.
- 2) Test or questionnaire assessment of the degree of readiness.
- 3) Checking results of the evaluation scale.
- 4) Evaluation scale for assessment results.

**Գ ր ա կ ա ն ո թ յ ո Ւ Ն**

1. Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխացման համակարգի կիրառման ուղեցույց: ԳՊՄԻ Գյումրի 2010:
2. Ջիվանյան Կ. Ա, Կարապետյան Ա. Ֆ և ուր.- Կենսաբանության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու //ՀՀ ԿԳՆ ԿԾԿ ԾԻԳ Երևան, 2007:
3. [inf@tululu.org](mailto:inf@tululu.org)- վերցրած է ապրիլ ամսին:

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Ադամյան Նելլի Վոլոդյայի - կ.գ.թ. դոցենտ, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ, Կրթության ազգային ինստիտուտի Շիրակի մասնաճյուղի գլխավոր մասնագետ,  
E-mail: [jivhar@yahoo.com](mailto:jivhar@yahoo.com).*

Տրվել է խմբագրություն 17.06.2013